

յիշատակութեան մէջ, ուր ժամ կ'որոշէ. «...Ա (1) աւրն հաւր մերոյ Հասարակաց եւ ... աւրն եղբար մերոյ Սեւաղէի եւ Բ (2) աւրն մաւր մերոյ Մամխաթուն(ին) ...» (Յիշատ. 6) :

1265ին Կոչիկ անապատի արձանագրութեան մէջ կը յիշուի իր եղբայրներուն հետ. «...Սերխան, Մարծպան, Մամիկոն կամեցաք նորոգել զմեր գերեզմանատունս...» (Յիշատ. 7) :

Իր մասին զժրատարար ուրիշ ծանօթութիւն չունիմ : Մահուան թուականը անյայտ է : Սակայն տեսնեք որ իր գերեզմանը Կոչիկ անապատի մէջ պէտք է փնտռել : Կ'երեւի թէ ունեցած է աղջիկ մը՝ Տաւրուխշահ, ըստ Սաղմոսալանքի արձանագրութեան ուր կ'ըսուի. «...Ես Վաչէ որդի Քրդին, որդո Վաչէի եւ Տաւրուխշահի՝ զստեր մարցպանա Մա(մ)կոնէից գնեցի զերերունս ի մեծ պարոնէն Շահնշահէ եւ ետու ի վանս Սաղմոսի...» (Յիշատ. 9) : Հետաքրքրական է որ Մարծպան Ա-ի աղջիկ Տաւրուխշահ ամուսնացած է Քուրդ իշխանին որդւոյն՝ Վաչէի : Իսկ Քուրդ իշխանն ալ ամուսնացած էր Մարծպան Բ-ի աղջկան՝ Սորիշահի : Այսպէսով Սորիշահ մայրը կ'ըլլար իր մեծ հօր եղբոր թոռան :

Տաւրուխշահ եւ Վաչէ կը յիշուին մեր պատմութեան մէջ : Վաչէ շփոթուած է զանազան գրողներէ (Հ. Ալիշան, Աճառեան, եւն.) : Հ. Ալիշան նոյնիսկ Տաւրուխշահը սրբազրած է Սաւրիշահի («Այրարատ», էջ 162) :

Մ Ա Մ Ի Կ Ո Ն Ա

Որդին է Հասանի եւ Մամա Սաթունի : Կը յիշուի իր եղբոր՝ Մարծպանի (Ա) հետ Շիքակոյի համալսարանի Կարմիր Աւետարանին յիշատակութեան մէջ (Յիշատ. 6), ինչպէս նաեւ Կոչիկ անապատի արձանագրութեան մէջ 1265ին (Յիշատ. 7) : Այլուստ ծանօթութիւն չունիմ իր մասին :

Հ Ա Մ Ա Զ Ա Ս Պ Բ

Կը յիշուի անգամ մը միայն 1191ի արձանագրութեան մէջ. «... Ի ՈՆ (1191) թվո, ես՝ Քուրդոս, Հասան, Համազաս(փ)պ, Սարգիս, որդիք Սմբատա, որդո Համ(ա)ղ(ա)սպար մարծպանի...» (Յիշատ. 1) : Սմբատ Ա-ի որդի այս Համազասպին մասին այլուր յիշատակութեան չեմ հանդիպած : Ամուսնացած էր կամ Ռէ՛ չեմ գիտեր :

Գ Ա Գ Ա

Իր մասին միայն ունինք արձանագրութիւն մը ի Հաղբատ, անթուական, ուր կ'ըսուի. «...Ես Գազա, թոռն Համազասպեանց...» (Յիշատ. 10) : Անդ կը յիշուի նաեւ Սորիշահ մը, որ զուցէ իր կ'ինը ըլլայ :

Ուրեմն զիտնարով հանդերձ թէ Գազա թոռն է Համազասպ Ա-ի կամ մեծի, չենք գիտեր թէ որո՛ւն որդին էր : Իր որդին ալ կը մնայ անանուն ըստ 1246ի արձանագրութեան, ուր միայն կ'ըսէ. «Ես որդի Գաւկաին...» (Յիշատ. 26) :

Ս Ա Ր Գ Ի Ս Ա

Սմբատ Ա-ի չորրորդ որդին, որ կը յիշուի «... Ի ՈՆ (1191) թվո,